Արձանագրություն 3

ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գրադարանի գրքերի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24.07.2019թ.
ժ.14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Մարգարիտա Ասլյան /գնահատող/
Արսեն Բաղդասարյան /գնահատող/
Արտավազդ Գևորգյան /բացող/
Անուշ Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա. Ավետիսյան)

1.1 <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ի կողմից 1-ին և 5-րդ, <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի կողմից 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով սահմանված ժամկետում ներկայացվել են ապրանքների ամբողջական նկարագրերը (տեղեկությունները):

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ն և <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ի հայտը 1-ին և 5-րդ, <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ի հայտը 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատման արդյունքների մասին

(Ա. Ավետիսյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետով ընդունված որոշումը <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ին 1-ին և 5-րդ, <<Մարի հրատարակչություն>> ՍՊԸ-ին 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել ընտրված մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 Ընտրված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմեն Ավետիսյան /նախագահ/
---------- Մարգարիտա Ասլյան
---------- Արսեն Բաղդասարյան
---------- Արտավազդ Գևորգյան
---------- Անուշ Գևորգյան
---------- Անուշ Մարգարյան /քարտուղար/